ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆԻ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՍՏԱՄԲՈՒԼ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Սրբուհի Գալյան, Արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Թուրքիայի Հանրապետություն (ք. Ստամբուլ), 2026 թվականի հոկտեմբերի 20-ից 22-ը:

Հրավիրող կողմը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (այսուհետ նաև՝ ՏՀԶԿ) և Թուրքիայի Հանրապետության արդարադատության նախարարություն:

Գործուղման նպատակը՝ մասնակցություն ՏՀԶԿ և Թուրքիայի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից համատեղ կազմակերպված՝ «Արդարադատությունը որպես հանրային ծառայություն. աջակցելով աճին, մրցունակությանը, պետական ծառայությունների արդյունավետ մատուցմանը և սոցիալական կայունությանը» թեմայով բարձրաստիճան երկխոսությանը (այսուհետ նաև՝ Բարձրաստիճան երկխոսություն):

Քննարկված թեմաները՝ քննարկվել է, թե ինչպես կարելի է ամրապնդել արդարադատության համակարգերը՝ որպես առանցքային հանրային ծառայություններ՝ տնտեսական ցուցանիշների բարելավման, մրցունակության և կառավարությունների արդյունավետությանը նպաստելու համատեքստում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Թուրքիայի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից համատեղ կազմակերպված՝ «Արդարադատությունը որպես հանրային ծառայություն. աջակցելով աճին, մրցունակությանը, պետական ծառայությունների արդյունավետ մատուցմանը և սոցիալական կայունությանը» թեմայով բարձրաստիճան երկխոսությանը մասնակցելու նպատակով՝ Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը 2026 թվականի հոկտեմբերի 20-ից 22-ը գտնվել է Թուրքիայի Հանրապետությունում (ք. Ստամբուլ): Բարձրաստիճան երկխոսությունն իրականացվել է Արդարադատության հավասար

հասանելիության վերաբերյալ ՏՀԶԿ 2026 թվականի գլոբալ կլոր սեղանի շրջանակներում:

Բարձրաստիճան երկխոսությանը, որին մասնակցել են տարբեր երկրների արդարադատության նախարարներ և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, քննարկվել է, թե ինչպես կարելի է ամրապնդել արդարադատության համակարգերը՝ որպես առանցքային հանրային ծառայություններ, որոնք նպաստում են տնտեսական ցուցանիշների բարելավմանը, մրցունակությանը և կառավարությունների արդյունավետությանը:

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը Բարձրաստիճան երկխոսության շրջանակներում «Measuring what matters — Outcomes, performance and productivity in justice» խորագրով միջոցառմանը հանդես է եկել ելույթով: Իր ելույթում Արդարադատության նախարարը գործընկերներին ներկայացրել է մարդակենտրոն արդարադատության ապահովման, դատական գործընթացների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման ուղղությամբ Հայաստանի ձեռքբերումները:

Սրբուհի Գալյանն անդրադարձ է կատարել վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների կատարելագործմանը, էլեկտրոնային համակարգերի ներդրմանը և դատավարական ժամկետների կրճատմանը, ինչպես նաև կարևորել է քաղաքացիների և տնտեսվարողների կարիքներին արձագանքող արդարադատության համակարգի զարգացումը: Բացի այդ, Արդարադատության նախարարը ընդգծել է, որ բարեփոխումների արդյունավետությունը պետք է գնահատել մարդկանց համար ապահովվող արդյունքներով՝ վեճերի ժամանակին և արդար լուծմամբ, ծառայությունների մատչելիությամբ, դատական ակտերի արդյունավետ կատարմամբ և հանրային վստահության ամրապնդմամբ:

Ամփոփելով ելույթը՝ Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը պատրաստակամություն է հայտնել խորացնել ոլորտում փոխհամագործակցությունը՝ հիմքում ունենալով ՏՀԶԿ-ի մարդակենտրոն արդարադատության չափման շրջանակը:

Արդարադատության նախարար

Սրբուհի Գալյան

26.10.2026 թվական

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ արդարադատության նախարարություն

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հայաստանի Հանրապետության վարչապետի 2026 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1002-Ա որոշման

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը *(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)*

4. Գործուղման վայրը Թուրքիայի Հանրապետություն (Ստամբուլ)

5. Գործուղման ժամկետները 2026 թվականի հոկտեմբերի 20-22-ը նեռարյալ

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը- *(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլ*

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սրբուհի Գալյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	230,308 դրամ	230,3
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	190 ԱՄՆ դոլար	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	68,567	
	Օրերի քանակը	2	

	Ընդամենը (դրամ)	137,134 (2*190$=380$*361,43դրամ= 137,343դրամ, որի 60%=82,406դրամ (2*190$=380$*360,88դրամ= 137,134դրամ Տարբերությունը 54,728	137,2
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	132 ԱՄՆ դոլար	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	47,709	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	143,126	143,1
Այլ ծախսեր	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր *(Սպասարկում ՊՊ սրահում)*		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		510,568	510,6

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

10/26/2026

Signed by: HARUTYUNYAN HAMLET 1701950219

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ